

**Բժշկական օգտագործման համար: Վալպրոատի պարունակող դեղեր
ընդունող բուժառուի քարտ
Հակաբեղմնավորում և հղիություն**

Ի՞նչ պետք է իմանաք

- Վալպրոատի պարունակող դեղեր – օգտագործվում են էպիլեպսիայի և երկբևեռ խանգարման բուժման համար:
- Վալպրոատի պարունակող դեղերի օգտագործումը հղիության ընթացքում կարող է լուրջ վնաս հասցնել Ձեր ապագա երեխային:
- Վալպրոատի պարունակող դեղերով բուժման ողջ ընթացքում անհրաժեշտ է մշտապես օգտագործել հակաբեղմնավորման արդյունավետ մեթոդ՝ առանց ընդհատումների:
- Մի մոռացեք այցելել Ձեր բժշկին առնվազն տարին մեկ անգամ:
- Կարդացեք դեղի փաթեթում ներառված ներդիր թերթիկը՝ մինչ Վալպրոատի պարունակող դեղերի օգտագործումը:
- Երբեք մի՛ դադարեցրեք Վալպրոատի պարունակող դեղերի օգտագործումը, քանի դեռ Ձեր բժիշկը չի հրահանգել, քանի որ Ձեր վիճակը կարող է վատթարանալ:
- Ինքնուրույն մի՛ դադարեցրեք Վալպրոատի պարունակող դեղերի օգտագործումը, եթե դուք պլանավորում եք հղիություն, և մի՛ ընդհատեք հղիությունը կանխարգելող միջոցների կիրառումը՝ նախքան Ձեր բժշկի հետ խորհրդակցելը:
- Անմիջապես դիմեք Ձեր բժշկին, եթե կարծում եք, որ հղի եք:
- Խնդրեք Ձեր բժշկին՝ տրամադրել դեղի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

*Տեղեկությունը վերաբերում է բոլոր աղջիկներին, երիտասարդ կանանց և վերարտադրողական տարիքի կանանց, որոնք օգտագործում են Վալպրոատի պարունակող դեղեր: Պահպանեք այս տեղեկատվությունը, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանաք կրկին ընթերցել: